Ստացանք Նոր-Նախիջեւանի Հայոց Մարդասիրական Ընկերութեան Խորհրդարանից իւր 1879 թուականի տարեկան հաշուետուութիւնը, որից երեւում.

Որ նա, (Խորհրդարանը) առ 1 ն յունվարի 1879 ամի ունեցել է ինն հազար չորս հարիւր վաթսուն եւ չորս րուբլի տասն եւ չորս կոպէկ (9464 ր. 14 կ.), որոնցից երկու հազար երկու հարիւր յիսուն եւ եօթն ր. տասն եւ չորս կոպէկը (2257 ր. 14 կ.) պատրաստի դրամ. հինգ հազար ինն հարիւր րուբլին (5900 ր.) տոկոսաբեր տոմսակներ. իսկ հազար երեք հարիւր եօթն ր. (1307) հին ապառիկներից ստացածներ եւ նուէրներ։

Խորհրդարանը 1879 թուականի ընթացքում ունեցել է մուտք հազար ինն հարիւր տասն եւ երկու րուբլի ութսուն եւ հինգ կ. (1912 ր. 85), որոնցից երեք հարիւր վաթսուն եւ երկու րուբլի յիսուն կոպ. (362 ր. 50 կ.) տոկոսք տոկոսաբեր տոմսակների. տասն երկու րուբլի ութսուն եւ հինգ կոպ. (12 ր. 85 կ.) Ընկերութեան դրամոց ընթացիկ շահաբերութիւն. հարիւր քսան րուբլի յիսուն կոպ. (120 ր. 50 կ.) Թոշակատու աշակերտաց թոշակներ. հազար յիսուն րուբլի (1050 ր.) 175 Անդամոց տարեկան վճար. երկու հարիւր քառասուն րուբլի (240 ր.) մշտնջենաւոր անդամակցութեան վճար. ութսուն եւ հինգ րուբ. (85) նուէր։ Եւ քառասուն երկու րուբ. (42) նախանձաւոր Անդամոց վճար։ 1879 թուականի ընթացքում եղած 1912 ր. 85 կ. եկամուտը միացնելով 1878 թուականի յաւելեալ 9464 ր. 14 կ. հետ, գոյանում է ընդամենը տասն եւ մի հազար երեք հարիւր եօթանասուն եւ եօթն րուբլի (11.377) ր.։

Իսկ 1879 թուականի ընթացքում եղել է ծախք. հազար ութն հարիւր իննսուն եւ երկու րուբլի վաթսուն եւ երեք կոպ. (1892 ր. 63) որից դպրոցի համար ծախսուել է միայն հազար եօթն հարիւր վեց րուբ. եօթանասուն եւ հինգ կոպ. (1706 ր. 75 կ.) իսկ հարիւր ութսուն եւ հինգ ր. ութսուն եւ ութ կոպ. (185 ր. 88 կ.) ընկերութեան այլ եւ այլ պիտոյից համար։

Ուրեմն 1879 թուականի 1892 ր. 63 կ. ծախքը հանելով 11.377 ր. գումարից, ունենում է Խորհրդարանը առ 1 ն Յունվարի 1880 ամի ինն հազար չորս հարիւր ութսուն եւ չորս րուբ. երեսուն եւ եօթն կոպ. (9484 ր. 37 կ.)

ԱԶԴ.

Խմբագրութիւնս Շամախուց յունվարի 24 ամսաթւով «[illegible] Կ. Ս.» ստորագրութեամբ մի գրութիւն ստացաւ. պարոն նամակագիրը, եթէ ցանկանում է իւր նամակի հրատարակութիւնը, թող բարեհաճի իւր անունն ու ազգանունը պարզապէս յայտնել Խմբագրութեանս։

Խմբագրութիւնս խնդրում է Պ. Պ. Թեմական տեսուչներից, որ իւրեանց հսկողութեան յանձնուած դպրոցների ուսումնական, տնտեսական եւ վիճակագրական դրութեան մասին տեղեկութիւններ հաղորդեն Խմբագրութեանս։ Նոյնը խնդրում է եւ Արարատի գործակալներից եւ յարգոյ ուսուցիչներից։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ